եւ հոտ հանդերձից քոց քան զամենայն խունկս։

11. Մեղը կաթեցուցանեն շրթունք քո քոյր իմ հարսն։ Մեղը եւ կաթն ի ներքոյ լեզուի քո եւ հոտ հանդերձի քո իբրեւ զհոտ կնդրկի։

12. Պարտեզ փակեալ քոյր իմ հարսն, պարտեզ փակեալ եւ աղբեր կնքեալ։

13. Առաքումն քո դրախտ նռնենեաց հանդերձ պտղով ծառոց։ Քրքում հանդերձ նարդոսիւ։

14. Նարդոս եւ նարկեզ, եղեգն եւ կինամոմն հանդերձ ամենայն փայտիւքն Լիբանանու։ Զմուռս եւ հալուե հանդերձ ամենայն ընտիր եւղաւք։

15. Աղբեր պարտիզաց եւ ակն ջրոյ կենդանւոյ եւ հոսեցելոյ ի Լիբանանէ։

16. Հարսն ասէ. Արի՛ հիւսիսի եւ եկ հարաւ։ Շնչեա՛ ի պարտեզ իմ եւ բուրեսցին խունկք իմ։

ցնարսն. ABCDELNOSZ գեղեցկացան ստինք քո քոյր իմ հարսն զի (AO քանզի) գեղեցկացան ստինք քո ի գինւոյ. DJբ առաւել քան։

11. ABCDDjEFLNZ Հանդերձից. D որպէս։

12. ACDNZ Աղբեւր։

13. D Առաքումնդ. EKZ պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց. AO պատգամաւորութիւն քո դրախտ հանդերձ պտղովք մրգաբերաց. Dj պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց հանդերձ ամենայն պտղովք մրգաբերաց իւրեանց եւ ամենայն անտառախիտ ծառոց մայրիցն Լիբանանու. EZ պտղովք. BCZn պտղովք ծառոց. FLS պտղոք. AO կիպրոս հանդերձ նարթիւ. EKZ կիպրոս հանդերձ նարդոսիւ. BDDjLN OSZn ծաղիկ հանդերձ նարդոսիւ։

14. L նարդոս եւ քրքում, եղեգն եւ կինամոն. DN նարդոս եւ քրքում, եղեգնխունկ եւ կինամոմիվ (N կինամոն). BCFSZn նարդոս, քրքում, եղեգն. AEK JեOZ նարդոս (A նարթոս) եւ քրքում, խունկ եղեգն. W նարգէս, եղեգն եւ կինամոմն. BCDjZn կինամոն. AKO կինամոմիվ. FJեS կինամոմն. Jբ եղեգն խունկ եւ կինամոմն. H կինամոն. AEKOZ ամենայն գլխաւոր խնկոք. AOJեZ ծառովք. EKZ ծառոք. BCDZn հանդերձ ամենայն փայտիւք Լիբանանու. N հանդերձ առաջին ամենայն իւղովքն. W հանդերձ առաջին ամենայն իւղովք. BZn հանդերձ ամենայն առաջին իւղով. D հանդերձ ամենայն եղովքն. O ամենայն խնկովք. FLS հանդերձ ամենայն առաջնովք իւղովքն։

15. CN Աղբեւր. այլք աղբիւր. AEFKOZ աղբիւր բուրաստանաց. BCDDjLNZn ջրհոր ջրոյ. AEKOZ բղխեալ ի Լիբանանէ. Dj բղխեցելոյ ի Լիբանանէ.

16. BCDEOZ ∧ Հարսն ասէ. O արի զարթիր հիւսիս. N զարթիր հիւսիսի. BZ հիւսիսի. D հիւսիսի. A հիւսուսիւ. FS արի հիւսիս. B շնչեայ. DO շնչեցէք. A շնչացէք. D խունկն իմ։

(Շարունակելի։)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՊԱՐՍԿԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԱՅՈՒՂՆԵՐ

— (Շարունակութիւն։)

ԱՅՈՒՂ ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ ԵՐԳԵՐԸ[1]

1. Սիրային։

ա. Հեռեվանց ծանաչում աս։

Աղ՝ղը։ Հեռեվանց ճանաչում աս,
Բլբուլի պէս կանչում աս.
Միշտ հետս մանն աս գալիս,
Չմոռնար դու ամանչում աս։

Եարը։ Ես բլբուլ ամ բաղի մէջ,
Աշուխների խաղի մէջ.
Իմ անուշն յիշվում ա,
Ամէն գրքի տաղի մէջ։

Աղ՝ղը։ Եփոր դու ինձ մոդ գէգաս,
Անուշ վարդի հոտ կէտաս.
Գիտեմ, որ ինձի կառնէս,
Էլ ի՞նչի ճոտ ճոտ կէգաս։

Եարը։ Ճոտ ճոտ գալն հախ ունեմ,
Վզիդ ոսկի կախ ունեմ.
Շեմ կարում աշկար անեմ,
Ես մորիցս վախ յոնեմ։

Աղ՝ղը։ Հապաս տեղն վախում աս,
Միշտ ինձանից գախում աս.
Մին օր մեր տուն ղօնախ գաս,
Գիտեմ խատրս պախում աս։

Եարը։ Ես ախչիկ ամ, նազ ունիմ,
Ոսկէ ջրաց մազ ունիմ.
Ուզում աս ինձ ճանանչես,
Մինչկուս չարգազ ունեմ։

Աղ՝ղը։ Ամէն բան մոռացել ամ,
Շատ լալով գոռացել ամ.
Քո աղիզ խատրի համար,
Ասկերէս հեռացել ամ։

Եարը։ Ես ինչ անեմ, ճար չունեմ,
Քեզնէ ավել եար չունեմ.
Աստուծուն ուրն յատնի է,
Սաթամ քեզ, զարար չունեմ։

Աղ՝ղը։ Խոսկերքրտ շատ համեղ ա,
Գարնան ծախկուկի եղ ա.
Ինչ մաղլեսում որ երթաս,
Ալլահվերդին էն տեղ ա։

---

[1] Երգերի տառական, բառական եւ այլ սխալները հրատարակում ենք անփոփոխ՝ իսկական բնագրի համաձայն։ Ա. Ե.

digitised by

Ե՞ՐԸ։ Սէրըն շատ ծանդր բան ա,
Մարդ ամ յուզում դիմանայ.
Զում ուզում անուս ասեմ,
Որ ամէն մարդ յիմանայ։

Բ. Երկարայխան։

Երկարայխան ականում աս,
Աչկ ու ուգով խապ աս տալիս.
Գայմ ու քամալըս տանում աս,
Ցիմանում ամ չապ աս տալիս։

Զառ ծամէրըտ քաշ ես արի,
Զուք գմանըտ զաթար շարի.
Հալբաթ ուրիշ եար աս ճարի,
Որ իմ բամըն կապ աս տալիս։

Երեվելի մեծ նշան աս,
Ինձ համար սուլթան ու խան աս.
Ինչ վաղդ աչկիս երեվման աս,
Միս ոսկոռքէս թափ աս տալիս։

Մէնակ տեղերին քնում աս,
Եարիցըտ կարօտ ինում աս.
Զալում ինձ լացացնում աս,
Դու խնդալով ծապ աս տալիս։

Ալահվերդին եմ բիգուման,
Դու սիրտըս քցէցիր գուման.
Կերպ ունես հրեշտակի նման,
Աչայիպ շօշափ աս տալիս։

Գ. Կէ խէնդրեմ։

Կէ խէնդրեմ Տէր բարէբարէն,
Սաղ պահէ քո ջանտ ազիզ.
Աստուած հէռի անի չարէն,
Ալօղայ միշտ բանտ ազիզ։

Երանի քո աչկի լոյսին,
Որ արժան ելար սուրբ մասին.
Ճանայպարըտ կէ ըսպասեն,
Քուր եւ եղբարնանըտ ազիզ։

Քաշեցիր ծանդր չարչարան,
Լինի քեզի ապաշխարան.
Թամամ քո եօթըն դայեարայ,
Հաստատ չար բադանըտ ազիզ։

Դու ռահմ արար աս նաչարի,
Միտկտ մաքուր, սիրտըտ բարի.
Վայելես չուր հաղար տարի,
Այտ պայծառ նշանըտ ազիզ։

Նշանըտ լոյսեղէն թակ է,
Քանց արեգագդէն խտակ է.
Դուշմանիտ ջանին կրակ է,
Ելնի քո ղուրբանըտ ազիզ։

Սուրբ մռօնի օրնութունն,
Քո վերայ կայ զօրութունն.
Տվեց քեզ յիշխանութունն,
Որ ունես ֆարմանն ազիզ։

Ալահվերտի խէնդրէց բարին,
Որ դու ապրես հարեւուր տարին.
Ամէնան խեջ ու նաչարին,
Հասնում ա դարմանըտ ազիզ։

Դ. Ոդրախ վայէլես։

Ուրախ վայէլես քո գտած,
Սրտով սիրելի եարն դու.
Նստում աս քախցը խօսալով,
Դմայդեմ բարաբար դու։

Ճանաչում աս քո մուշտարին,
Լաւ աս քցի նազարըն դու.
Աչաբ խաղ ու խնդում ունես,
Էլ չունես ահ ու զարն դու։

Կապվել աս թուխտ ու թարէզով,
Որտեղ գտանես ճարն դու.
Երբ մօռացար հին բաներըտ,
Թազայ ճանայպար աս բացի։

Դառ հալայ արեունըտ եռ ա,
Վէրջիտ օրն չես մտացի.
Շատօնք ամ տեսի էտ նման,
Փոշիմանեն հալայ կացի։

Ձես խաբար, տանուլ աս տվի,
Հաբաս դու մի ուրախացի.
Վերջն քեզի ինաս կէգայ,
Մի քաշի էտ զարարն դու։

Թազայ պղինձն թէ լավ ա,
Ինչ են մեն գալիս, հին ուզում.
Կամ ոսկի ու արծաթ տալիս,
Ջավայիրն անգին ուզում։

Հեծնելու հայվանն շատ ա,
Ասլէ արապի ձին ուզում.
Վիզն հէքալով զարթարաց,
Գուլայբաթունով չին ուզում։

Ինսանի մէջ մեն են գալիս,
Մին լաւ ասլէմադ կին ուզում.
Որ մարդի սիրտն չէ խօցի,
Ինչ աս կորի զարարն դու։

Այս յունան փուչ աշխարի մէջ,
Զադ չի մնայ մարդի համար.
Թէկուզի զառբավ հաքանի,
Վերէն կապի ոսկէ քամար։

Մառջան մարգարիտով շարած,
Ոտիցն գլուխն սարայսար.

A.R.A.R.@

Էտոնք զարտ է աշխարի մէջ,
Սովորութուն է մուղարար։

Քո ճանապարն ճանաչէ,
Մի ծուվի գնայ սարն դու.
Վարդան օղլի լաւ մտացէ,
Տես աշխարքն դոր ա ելի։

Ժամանակներն փոխվել ա,
Աննամուսի օր ա էլի.
Ամէն մաջլիսում տեսել ամ,
Մեծ պատիվն շոր ա ելի։

Առաջ էտէնց բաներ չէ կար,
Ողջ ամէնն նոր ա ելի.
Գիքը ու ղուսէն քեզ ան տվի,
Որ գտնես մին հաղարն դու։

Ե. Օվ որ։

Օվ որ քեզի ինձնէ հանից,
Հայ միշտ աչկէրըն լաց մնայ.
Խէր չէ տեսնու իրան ջանից,
Լաշն տկլոր ու բաց մնայ։

Իրանի բրիցն չէ խէրվի,
Բորտի ու դահմ քէրվի.
Կրակ ընկնի, սիրտն էրվի,
Մխալով կսկծաց մնայ։

Եթէ աբրի հարուր տարի,
Մտկիցն մոլոր շիվարի.
Դոբն որ գնայ հաց չէ ճարի,
Որ միշտայպէս սոված մնայ։

Վարդան օղլի դու մեղքն թող,
Գիտես որ նա չի մտնի հող.
Մին տեղ կէ սատակի դոր գող,
Հաղնեցիր, թող դրած մնայ։

2. Ղարիպի երգ։

ա. Ինչ մարդ որ։

Ինչ մարդ որ դուս երթայ իրայ աշխարէն,
Շատ չատին է ետ դառնալն ղարիպին.
Սապռ ու ղարար չունի ուր այուղարէն,
Տունքն կէ մտածին գալն ղարիպին։

Ընդանի, բարէկամ ճանփեն նայելով,
Խրատ տալով, իրուր սիրարն շահելով.
Ղարիպ մարդն հաղիւ գլուխ պահելով,
Ոչ ով չի յիմանայ հալն ղարիպին։

Ղարիպ մարդքն մէնաք որ մնայ խանքն,
Նոր կիմանայ իրան դոստ ու դուշմանն.
Ինչ վաղտ միաքն ընկնի ուր ան վագանքն,
Տեսնես արտայսուքով լալ ղարիպին։

Ղարիպ մարդու զանձքն մաղբուր է,
Թոփ արաց ապրանքքն թէ ինչ քան բուր բուր է,
Միտկքն մոլոր, էլի սիրտքն տխուր է,
Թէ հաբցնեն թրմայշալքն ղարիպին։

Ալլահվէրդի բուլոր աշխարքն տեսար,
Ամէնան մաջլիսում թարիֆքն ասավ.
Թէ ականայտես, թէ ականջով լսար,
Ինչ դժվար է հոգի տալն ղարիպին։

3. Կրօնական։

ա. Լոյս Քրիստոս։

Լոյս Քրիստոս քեզ աղաչեմ,
Որ դու միխիթարես ինձի.
Բացրաձայն յուղեմ պաղատեմ,
Միշտ օգնական դար ես ինձի։

Մտկից քոռ, լեղվիցս լալ եմ,
Թօթապվաց չօլախ անգալ եմ.
Հոգի մարնով մեղուցեալ եմ,
Ցուսսալ եմ արթար ես ինձի։

Զար գործեր, չար մեկք արած եմ,
Սատանի ձեռքով տարաց եմ.
Մութն խավարին կորած եմ,
Միտածես, դու ճար ես ինձի։

Ալլահվերտի է բիղարար,
Տէր թաբայոր դու անես ճար.
Քցես մարտիրոսաց ղաթար,
Լոյսով էտ ղարթարես ինձի։

Բ. Սուրբ Օհանէս։

Առաջընդայ բացր սալիջան,
Մեծայպայծառ սուրբ Օհանէս.
Միայծնուդ երեվելիան,
Անուշայբառ սուրբ Օհանէս։

Անուշայհամ բառբառեցար,
Կամավ մահի դո խունարեցար.
Լոյսեղէն թաղն ըստացար,
Գլխիտ ա փառ սուրբ Օհանէս։

Գլխիտ վերայ բացրը նշան,
Մուշ անվանի բնայկարան.
Հարաֆուց յուսիս վտեդ գան,
Անարատ դառ սուրբ Օհանէս։

Գառինդն բերեն մատաղի,
Ուղտայորն գայ սօրաղի,
Որպէս ոչխարն թափի աջի,
Ոսկէ մաջառ սուրբ Օհանէս։

Մաջառբտ ղուդրաթի քաշաց,
Օթախներբտ գառ ղումաշաց.

Դոնեբրտ մարմար քար տաշաց,
Կանթեղըտ վառ սուրբ Օհանէս։

Կանթեղըտ վառ զօր գիշերի,
Ինչ մարդ որ քեզ միտըն բերի,
Կաղատես գուլթսաղ ու գերի,
Զուք կողմտ ճառ սուրբ Օհանէս։

Ճառերըտ շարաց սուրբ վանգն,
Ինձի չէ քցես տանջանգն.
Վարդան օղլոյս աղայչանգն,
Խնդիրըս առ սուրբ Օհանէս։

4. Բարոյական-խրատական։

ա. Մարդըն պէտկ ա։

Մարդըն պէտկ ա խոնար կենայ,
Եթէ ֆայմ ու յուշ ունէնա.
Մտածի լավ բան հասկանա,
Համ էլ իրնից ջուշ ունէնա։

Ջուշ անի, յիսկի չէ սառի,
Դոր կանթեղ մաջլիսին վառի.
Քաղցրաձայն յուղիղ բառբառի,
Լեզուն քաղցր անուշ ունէնա։

Անուշ կենայ, սիրուն բարթի,
Որ խօշըն գայ ամէն մարթի.
Օրինակ մին ղօնչայ վարթի,
Վուշ թէ ձեռին փուշ ունէնա։

Փուշ օրինակ է սատանի,
Որ նայդաստ է մարթի ջանի.
Կէ խափի, ճամփից կէ հանի,
Մարդ պէտկ ա թաշվիշ ունէնա։

Թաշուշ անի ամէն վախտի,
Որ չարըն իրան չէ յաղտի.
Տեղ ունէնա մէջ գրախտի,
Աղօթկն ըզդուշ ունէնա։

Ալլահվերդին է մեղայոր,
Իսկի տեղից չունի շնոր.
Եթէ լինի արժանաւոր,
Պէտկ ա խրխա փուշ ունէնա։

բ. Ավալի խօսողըն։

Ավալի խօսողն եթէ մատծի,
Թէ դաբ ուրն ընդդեմ ինչ բան կուբերի.
Բնութեան շարժմամըն բերան կու բանացի,
Ցունանութեամբ գլխին թիֆան կու բերի։

Միտկտ սրընթաց է, մի գցի չարին,
Ետ քաշէ, սրտումըտ հաւաքէ բարին.
Մարմնըտ տկար է, մի տայ խավարին,
Կէ գցի խորխորատ, ղնդան կու բերի։

Ես Ալահվերդին եմ, նման մահագի,
Գուքրթ մի փոխարկի գուշ ավայդակի.
Ինչ մարտ որ առասպիալ օրէնգըն փագի,
Զանձըն չարչարելով գիվան կու բերի։

գ. Ինչ մարդ որ։

Ինչ մարդ որ մարդու հետ սիրելի լինի,
Պէտկ ա, որ ամէն ժամ իրուր ջան ասեն.
Ինչքան հառփայ լինի, որ խմի գինի,
Ինչ պէտկ ա խօսալով հայ հայվան ասեն։

Եղպարութեան ով կարէ պահէ,
Որ ջան ղուրբան անի ու խաթրն շայէ.
Սիրտըն որ կտրվի չէ սաղնա դայի,
Այսուհետ եուսֆուվը թէ քանհան ասեն։

Ամէն տեղ կու ճարվի ճարտար գրայդիր,
Անուշ թարքմանելով հասկանայ ընդիր.
Ալահվերտի անկաջովըտ դու լսար,
Էլ չէ խօսաս, որ քեզ վատայբան ասեն։

Շարունակելի։) Հրատարակեց՝ ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

Հետագայ հատուածը այս օրերս միայն գտայ Պարիսի Bibliothèque nationaleի Հայերէն ձեռագիրներու հաւաքածոյին 257ՐԴ թուահամարը կրող հատորին վախճանը։

Զանազան հեղինակներու գործերէն քաղուածներ, խառն տաղեր ու պատմական կտորներ պարունակող փոքրիկ հատոր մ'է ձեռագիրը, ընդօրինակութիւն մը, որուն թուականը յայտնի չէ, ոչ ալ ընդօրինակիչին անունը, բայց ըստ ամենայն հաւանականութեան 17ՐԴ դարու կը վերաբերի այն, քանի որ անոր մէջ տեղ մը կը վերաբերի այն, քանի որ անոր մէջ տեղ մը 1616 թուականը նշանակուած կը տեսնանք։

Հատուածը՝ որ բժշկական է, մեծ կարեւորութիւն մը թէեւ չ'ընծայեր, սակայն հարկ կը համարիմ ծանօթացնել զայն, նախ՝ իբր ամբողջացում այն աշխատասիրութեանս, զոր 1889ին հրատարակած եմ Պարիսի Ազգ. Մատենադարանի Հայ բժշկական ձեռագիրներու մասին[1], ապա իբր հայ բժշկական հնութիւն

1 Տես «ԱՐԵՒԵԼՔ», Կ. Պոլսոյ, թիւ. 1730, 1731, 1733, 1734, Հոկտեմբեր եւ Նոյեմբեր 1889։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հայ ԽՍՀ